անցան։ Եւ զմնացորդն դէմ եղեալ անցան զմիջով քաղաքիս՝ ի տան մեծ էֆէնտուն երթալ այնպիսի մեծաւ փառօք, որ ի կողմս արևմտեան էր մօտ պարըսպին և դրանն այնմիկ որ կոչի Անդրիանու։

գ. Եւ յետ անցանելոյ սմին եկն և մատծախն ի պետաց ոմանց յառաջ երթալ, և ապա մանկունք նոցին զինուք դասս դասս, և զարդարեալ էին զոչխարսն և զայծիսն դիպակով և ծիրանով և գեղեցկագունիցն ոսկէջուր և սուսերակալ կամար գօտօք յոսկոյ և ոսկէզօծ դաշնակօք ի գօտիսն բարձեալ, արարեալ զեղջիւրսն ի հաճոյս աչաց հայեցուածոց։ Եւ զմսահանսն հանդերձ բեռամբ մսոյ ոչխարացն և արջառացն, և ընդ նոսա պետքն հանդերձ թմբկօք[1]) և փողով, անդ ա-բարեալ զաւրհնութիւն թագաւորին և անցանէին զքաղաքսն երթալ յայն տեղի ի տան էֆէնտուն։ Եւ ընդ այսմ բանակիս էր եւս մումն, զոր ի վերայ ըղտուն նստեալ մանուկ մի զնոյն գործէր։

դ. Եւ ապա եկն տէլլալն և ընդ նմա քեհեա Պէզէստանին. նոքա ևս զինուք և զրահիւք։ Պաշճի, փաչաճի և չօմլէկճի։

ե. Եւ ապա եկն բանակ մրգածախացն որ ասի պազարճի. առաջի սոցա երթայր չորպաճի չարտախին և ապա պետքն և ապա զօրք մանկանցն դաս դաս զինուք և զրահիւք և թախթ և գահս չինեալ, վարդովք եւ մրգովք զարդարեալ եւ Բ խանութ լցեալ մրգովք ի վերայ ըղտուց, որ տղայքն ծախէին զմիրգսն և նաւ մի քարշեալ տանէին լի բարեօք, և ընդ նոսա զօլօղլանիքն եկեալ և մուղթասիպն զկնի՝ փողով և թմբկօք[2]) և բեռամբ իւրեանց։ Եւ ընդ այսմ բանակիս էր խառն պախալն և զաղանճի և տօքմէճին և եաղճին մերկ մարմնով, զտիկ իւղոցն արք Բ դա-

1-2) թմկօր.